ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անահիտ Առաքելյան, Բյուջետային գործընթացի համակարգման վարչության հանրային իշխանության առանձին մարմինների գծով բյուջետային ծրագրավորման բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2025 թվականի մարտի 24-28-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկի PEMPAL ծրագիր

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հանրային ծախսերի կառավարման գործընկերային ուսուցման ցանցի (PEMPAL) կողմից կազմակերպվող PEMPAL ծրագրի ողջ ցանցի լիագումար նիստին մասնակցելու նպատակն էր՝ քննարկել նոր հնարավորություններ և գործիքներ, որոնք հիմք կհանդիսանան պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) ապագայի համար և կենսական դեր կխաղան 2026-2030թթ. PEMPAL ռազմավարությունում: Հնարավորություն ստեղծել ուսումնասիրելու պետական ֆինանսների կառավարման PEMPAL-ի պրակտիկայի երեք համայնքների ոլորտների փորձը:

5. Քննարկված թեմաները.

Նիստի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Ռազմավարական ՊՖԿ,

2) «Կանաչ» ՊՖԿ,

3) Թվային ՊՖԿ,

4) Բյուջետային պրակտիկայի համայնքի շրջանակներում, անդամ երեք երկրների (Վրաստան, Ուկրաինա, Բուլղարիա) կողմից ներկայացվեց կապիտալ բյուջետավորման

վերաբերյալ իրենց ընթացիկ և պլանավորված բարելավումները, ինչպես նաև դրա հետ կապված մարտահրավերները:

5) Վարժություններ և գործնական խմբային աշխատանքներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կլոր սեղանի շուրջ քննարկվել են հիմնական հնարավորությունները և խնդիրները, որոնք վերաբերում են ռազմավարական պլանավորման կապին պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) հետ և առաջարկվել են միջոցառումներ ու գործիքներ, որոնք PEMPAL-ը կարող է տրամադրել մասնակից երկրների աջակցման համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախատեսվում են առցանց քննարկումներ, որոնց ընթացքում ձևավորվում է առաջ քաշված խնդիրների լուծման մեխանիզմները: Նիստի ընթացքում ձեռքբերված գիտելիքները լայն հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու միջազգային փորձին, որոշ կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու նպատակահարմարության հարցը:

Ստորագրությունը,

ամսաթիվը

02.04.2025թ.